



Saint Yeghiche Armenian Church Parish Սուրբ Եղիշէ Կայոց Եկեղեցւոյ Ծովի

Registered charity No. 1173403

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk

www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading,

8th February 2026

Bulletin 09/2026

Sixth Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՏՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆԻ:1-11

Պօղոս, Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Զրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան, յաւիտենական կեանքի յոյսով՝ որ անսուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինծի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով - ,

Տիտոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. շնորհք եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Զրիստոսէ՝ մեր Փրկիչէն:

Ես ձգեցի քեզ Կրեւտէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երէցներ նշանակես ամէն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անատակութեան համար ամբաստանուած կամ ըմբոստ չըլլան: Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ զինեմոյ, ոչ զարնող, ոչ ամօթալի շահախնդրութեան հետամուտ եղող, հապա՝ հիւրասէր, բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները:

Զանի որ շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մա՛նաւանդ անոնք՝ որ թփաատութենէն են: Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուներ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ ամօթալի շահախնդրութեան համար:

The Epistle of St Paul to the Titus 1:1-11;

Paul, a servant of God and an apostle of Jesus Christ to further the faith of God's elect and their knowledge of the truth that leads to godliness—in the hope of eternal life, which God, who does not lie, promised before the beginning of time, and which now at his appointed season he has brought to light through the preaching entrusted to me by the command of God our Savior,

To Titus, my true son in our common faith:

Grace and peace from God the Father and Christ Jesus our Savior.

Appointing Elders Who Love What Is Good

The reason I left you in Crete was that you might put in order what was left unfinished and appoint ^a elders in every town, as I directed you. An elder must be blameless, faithful to his wife, a man whose children believe ^b and are not open to the charge of being wild and disobedient. Since an overseer manages God's household, he must be blameless—not overbearing, not quick-tempered, not given to drunkenness, not violent, not pursuing dishonest gain. Rather, he must be hospitable, one who loves what is good, who is self-controlled, upright, holy and disciplined. He must hold firmly to the trustworthy message as it has been taught, so that he can encourage others by sound doctrine and refute those who oppose it.

Rebuking Those Who Fail to Do Good

For there are many rebellious people, full of meaningless talk and deception, especially those

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

of the circumcision group. They must be silenced, because they are disrupting whole households by teaching things they ought not to teach—and that for the sake of dishonest gain.

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 7:37-52

Տօնին վերջին մեծ օրը՝ Յիսուս կայնած էր ու կ'աղաղակեր. «**Եթէ մէկը ծարաւ է, թող գայ ինձի եւ խմէ: Ա՛ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիրքը կ'ըսէ**»: Ասիկա ըսաւ Հոգիին մասին՝ որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. որովհետեւ Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին, քանի որ Յիսուս փառաւորուած չէր տակաւին:

Բազմութենէն շատեր՝ երբ լսեցին այս խօսքը՝ կ'ըսէին. «Ճշմարտապէս ա՛յս է մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Ա՛յս է Զրիստոսը»: Ուրիշներ ալ կ'ըսէին. «Միթէ Զրիստոս Գալիլեայէ՞ն պիտի գայ: Միթէ Գիրքը չ'ըսեր թէ Զրիստոս պիտի գայ Դաւիթի զարմէն ու Դաւիթի եղած գիւղէն՝ Բեթլեհէմէն»: Ուստի պատակտում եղաւ բազմութեան մէջ՝ անոր պատճառով: Անոնցմէ ոմանք ուզեցին ձերբակալել զայն, բայց ո՛չ մէկը ձեռք բարձրացուց անոր վրայ:

Ուստի սպասաւորները եկան քահանայապետներուն եւ Փարիսեցիներուն քով, որոնք ըսին անոնց. «Ինչո՞ւ հոս չբերիք զայն»: Սպասաւորները պատասխանեցին. «Ո՛չ մէկը երբեք խօսած է այս մարդուն պէս»: Ուստի Փարիսեցիները պատասխանեցին անոնց. «Միթէ դո՛ւք ալ մոլորեցաք: Պետերէն կամ Փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր. բայց այս բազմութիւնը՝ որ չի գիտեր Օրէնքը՝ անիծեալ է»: Նիկողեմոս ըսաւ անոնց, (որ նախապէս՝ զիշերուան մէջ զացեր էր իրեն, եւ անոնցմէ մէկն էր.) «Միթէ մեր Օրէնքը կը դատէ՞ մարդ մը, եթէ նախապէս չսէ զայն, եւ չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ»: Պատասխանեցին անոր. «Միթէ դո՛ւն ալ Գալիլեայէն ես. զննէ՛ ու նայէ՛, որ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր»:

The Holy Gospel of Jesus Christ according to John 7:37-52

On the last and greatest day of the festival, Jesus stood and said in a loud voice, “**Let anyone who is thirsty come to me and drink. Whoever believes in me, as Scripture has said, rivers of living water will flow from within them.**” By this he meant the Spirit, whom those who believed in him were later to receive. Up to that time the Spirit had not been given, since Jesus had not yet been glorified.

On hearing his words, some of the people said, “Surely this man is the Prophet.”

Others said, “He is the Messiah.”

Still others asked, “How can the Messiah come from Galilee? Does not Scripture say that the Messiah will come from David’s descendants and from Bethlehem, the town where David lived?” Thus the people were divided because of Jesus. Some wanted to seize him, but no one laid a hand on him.

Unbelief of the Jewish Leaders

Finally the temple guards went back to the chief priests and the Pharisees, who asked them, “Why didn’t you bring him in?”

“No one ever spoke the way this man does,” the guards replied.

“You mean he has deceived you also?” the Pharisees retorted. “Have any of the rulers or of the Pharisees believed in him? No! But this mob that knows nothing of the law—there is a curse on them.”

Nicodemus, who had gone to Jesus earlier and who was one of their own number, asked, “Does our law condemn a man without first hearing him to find out what he has been doing?”

They replied, “Are you from Galilee, too? Look into it, and you will find that a prophet does not come out of Galilee.”

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

Տոն Ս. Իսահակ Պարթև Հայրապետի

Ս. Իսահակ հայրապետը Ս. Ներսես Մեծ կաթողիկոսի որդին էր, Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմի վերջին ներկայացուցիչը, ով 387 թվականից ի վեր 52 տարի եղել է հայոց հայրապետական աթոռի գահակալը: Լինելով կրթված և հմուտ երաժշտական, հռետորական արվեստների, իմաստասիրության և լեզվագիտության մեջ՝ Ս. Սահակ Պարթևը մեծ նպաստ է բերել հայ ազգային մշակույթի զարգացմանը, եղել հայոց գրերի ստեղծման ջատագովը, Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ դարձել հայ դպրության ու եկեղեցական մատենագրության հիմնադիր: Տառերի գյուտից հետո Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը սկսում են Աստվածաշնչի թարգմանությունը և այնպես կատարյալ են դա անում, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը դարեր հետո կոչվում է Աստվածաշնչի թարգմանությունների թագուհի:



Commemoration of the Pontiff St. Sahak Partev

Pontiff St. Sahak Partev was the elder son of Catholicos St. Nersess the Great, and the last Catholicos of the Armenian Church who descended from the lineage of St. Gregory the Illuminator. He became Catholicos of All Armenians in 387 A.D., and reigned for an astounding 52 years. Being talented in music and educated in the rhetorical arts, philosophy and linguistics, St. Sahak greatly contributed to the development of Armenian national culture. He was the strongest advocate for the creation of an Armenian Alphabet, and became its chief patron.

Following the creation of the Armenian Alphabet, St. Sahak and St. Mesrop opened a school for translators in the city of Vagharshapat (Etchmiadzin). There they begin the translation of the Holy Bible into Armenian and did it so perfectly, that centuries hence the Armenian Translation is called the “Queen Translation of the Breath of God”. The first sentence translated from the Holy Bible is the opening verse of the Book of Proverbs: “To know wisdom and instruction, to perceive the words of understanding”.



**ՕՐԱՅՈՅՑ
2026
CALENDAR**

**ՍՐ ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ
ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԾՈՒԽ**

**ST YEGHICHE
ARMENIAN CHURCH
PARISH**

13b Cranley Gardens
Kensington, London, SW7 3BB, UK
Tel: +44 20 7373 8133
Email: info@styeghiche.org.uk
Web: www.styeghiche.org.uk
[facebook.com/styeghiche](https://www.facebook.com/styeghiche)



Dear Parishioners

and

Armenian Community Members

St Yeghiche Armenian Church, has published its 2026 wall calendar, with both Armenian Religious Feast dates and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday 30th November, 2025 and till stock lasts.

We encourage every Armenian household to have one, and bring our Lords blessing to your home and family.

Thank you for your support

St Yeghiche Armenian Church Parish Council

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Ս. Ղևոնդյանց քահանաների հիշատակության օր 10/02/2026

Ղևոնդյան քահանաներն Ավարայրի ճակատամարտում սրբացած քաջորդիներն են: Նրանք քայլում էին հայոց բանակի առջևից և իրենց բոցաշունչ խոսքերով քաջալերում, ոգի ու ուժ հաղորդում Քրիստոսի եկեղեցու և հայոց ինքնության համար պարսից զորքերի դեմ ոտքի ելած հայ մարտիկներին: Տարիքով ավագը Ղևոնդ Երեցն էր, ում անվան կողքին հայ պատմիչները հիշատակում են նաև Հովսեփ կաթողիկոսի, Սահակ եպս. Ռշտունյացի, Բասենյաց Թաթիկ եպիսկոպոսի, Մուշե կամ Մուշեղ քահանայի, Արշեն երեցի, Սամվել քահանայի, Աբրահամ և Քաջաջն սարկավագների անունները: Վարդանանց հերոսամարտից հետո պարսից Հազկերտ արքան վրեժխնդիր եղավ հայոց քաջերից: Նրա հրամանով նահատակվեցին հայոց քաջարի հոգևորականները: Հայ Առաքելական եկեղեցին Ղևոնդյանց սրբերի հիշատակը նշում է բուն բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը:

Feast of St. Ghevond the Priest and His Companions

The Feast of St. Ghevond the Priest and His Companions is dedicated to the blessed memory of the Armenian priests who fought alongside St. Vartan and the entire Armenian Nation for their Christian faith in 451 A.D. in the Battle of Avarayr.

The eldest among them was Priest St. Ghevond, and among his companions were Catholics Hovsep, Bishop Sahak of Syunik, Bishop Tatik of Basen, Priest Mushe or Mushegh, Priest Arshen, Priest Samuel, Deacons Abraham and Kajajn.

After the Battle of Avarayr the Persian King Hazkert took revenge on Armenians and ordered to kill the brave priests.

According to the tradition the day of the Feast of St. Ghevond the Priest and His Companions is the day of the clergy.



Ս. Վարդանանց զորավարների և 1036 վկաների հիշատակության օր 12/02/2026

451 թվականի մայիսին, Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, Հայ Եկեղեցու և քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծագույն սրբերից են: Իրենց նահատակությամբ նրանք հաստատեցին հայ ժողովրդի ապրելու կամքը և լինելիության իրավունքը: Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց ի վեր Հայ Եկեղեցին սերտորեն կապված է եղել հայրենիքի պաշտպանության գործին: Դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է: Պարսից զորքերի դեմ մղված պատերազմում հայ մարտիկների կողքին էր Հայոց եկեղեցին՝ Հովսեփ կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի առաջնորդությամբ: Մարտից առաջ հայ հոգևորականները ոչ միայն քաջալերում էին զորքին մակարայեցիների օրինակով, այլև մկրտության և Սուրբ Պատարագի խորհրդով առավել ամրապնդում էին նվիրյալների հավատն ու ոգին: «Եվ սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաև ավագան, և եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին և առավոտյան Սուրբ Հաղորդություն ընդունեցին», - գրում է Եղիշե պատմիչը Վարդանանց պատերազմից առաջ կատարվածի մասին: Ս. Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և հայկական բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

Feast of St. Vartan the Captain and Companions

The Feast of St. Vartan the Captain and his 1036 Companions marks their martyrdom 1551 years ago in the battle of Avarayr, fighting for the freedom of conscience and religion for the Armenian Nation. It was to be the first testimony of many to follow that the Armenians were a people who freely chose Christ, remained steadfast in their Christian faith, and would not betray that faith for any ransom. “Vartanants” as it is commonly called, is one of the most sacred feasts of the Armenian people.

In the Armenian Church, the Feast day of St. Vartan the Captain and Companions is also celebrated as the Naming Day of His Holiness Karekin II. To mark the occasion, at the conclusion of Divine Liturgy, a Pontifical Prayer is offered before the Holy Altar of Descent.



Տեառնընդառաջ: Տոն քառասնօրյա Փայտեանն Քրիստոսի ի Տաճարն Տերունի այս տոնը հիշատակում է 40-օրական Հիսուսի ընծայումը Տաճարին:

Ըստ հրեական օրենքի՝ ամեն մի արու զավակի ծնունդից հետո, երբ լրանում էին սրբագործման 40 օրերը, նորածնի մայրն իր երեխայի հետ այցելում էր Տաճար, զոհ մատուցում եւ իր զավակի համար օրհնություն ստանում քահանայից: Այսպես և ս. Աստվածամայրը 40-օրական Հիսուսի հետ ներկայանում է Տաճար:

Այս մասին հիշատակում է Ղուկաս ավետարանիչը: «Երբ նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի: Եվ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ» (Ղուկ. 2:22-24): Ներկայացնելով Հիսուսի կյանքի այս դրվագը՝ Ավետարանիչը պատմում է նաև Սիմեոն ծերունու մասին, որին Սուրբ Հոգուց հրամայված էր մահ չտեսնել, մինչև Տիրոջ Օծյալին տեսնելը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Տեառնընդառաջը կամ 40-օրական Հիսուսի ընծայումը տաճարին տոնում է Աստվածահայտնությունից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին: Հայ Եկեղեցու կանոնի համաձայն, տոնի նախօրեին, երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի չորս ծագերը: Եկեղեցու կանթեղներից վերցված կրակով վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Տեառնընդառաջի պատարագից հետո Հայոց եկեղեցիներում տեղի է ունենում Նորապսակների օրհնության կարգ: Տեառնընդառաջի տոնին Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում է ս. պատարագ:

Tiarn'ndaraj 14/02/2026

In accordance with the Law of Moses, the infant Christ was brought to the Temple by Mary and Joseph and presented to God. A man named Simeon was there, to whom it had been revealed that he should not see death before he had seen the Lord. Simeon held the infant in his arms, blessed God, and said, “Lord, let your servant now depart in peace, for my eyes have seen your Salvation, which you have prepared before the face of all people. A Light to lighten the Gentiles, and the Glory of Your people, Israel.” (Luke 2:29-32)



In the tradition of the Church, Evening Services (Nakhatonak) are conducted

on the night preceding the Feast Day. At the conclusion of the service, the priest lights a candle from the Holy Altar, and distributes the flame to all present. With great care, the faithful take the lit candles home to their families.

The morning of the Feast Day, Divine Liturgy is celebrated in Armenian Churches throughout the world. The hymn offered during the Liturgy commemorating Tiarn'ndaraj glorifies Simeon's articulation of “a Light to lighten the Gentiles”. The hymn praising Simeon also lauds the Mystery of the Incarnation.

Many additional customs have been inherited from the past, including the blessing of the four corners of the world in the Andastan Service, the blessing of newlywed couples, as well as offering prayers for the crops and fertility of the fields.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

Յանուն Հօր եւ Արդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Աչքերս տեսան Քո փրկութիւնը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, յոյս, որ կլինի յայտնութիւն հեթանոսների համար» (Ղուկ. 2:30-31):

Միքելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Ձեզանից շատերը ամէն տարի փետրուար 13-ի երեկոյեան՝ Յիսուս Մանկան Ծնունդից ուղիղ 40 օր անց, աշխարհի որ անկիւնում էլ լինեն, գնում են մօտակայ հայկական եկեղեցին, մասնակցում աղօթքին, նախատօնակի ժամերգութեանը եւ եկեղեցու ճրագից յոյս վերցնում ի յիշատակ Տեառնըդառաջի տօնի գեղեցիկ խորհրդի:

Բազմաթիւ մարդկանց համար այս տօնը «ճրագ տանելու» օր է, այլոց համար «կրակ վառելու եւ վրայով թռչելու» օր, երրորդների համար «խնամիների տուն այցելութեան եւ նորասպասկների օրհնութեան» օր: Բայց կարելու է հիմնական իմաստը միշտ մտքում եւ սրտում ունենալը, որպէսզի իրապէս օրուայ տօնական խորհուրդին հաւատարիմ մնանք եւ օրհնութիւն ու շնորհ առնենք:

Ինչի՞ մասին է Տեառնըդառաջի տօնը: Անունն իսկ յուշում է, որ այն Տիրոջն ընդառաջ գնալու յիշատակումն է՝ Միմէոն Ծերունու նմանութեամբ: Այս տօնը աւետարանական ակունք ունի, երբ Միմէոն Ծերունին, Տիրոջ Հոգուց ներշնչուած, ընդառաջ ելաւ Տաճար ընծայման բերուած 40-օրեայ Յիսուսին, գրկեց Նրան, օրհնեց Աստծուն եւ այս բառերն ասաց. **«Այժմ, ո՛վ Տէր, խաղաղութեամբ արձակիր քո ծառային՝ լստ քո խօսքի. որովհետեւ աչքերս տեսան փրկութիւնը քո»** (Ղուկ. 2:30):

Այն ոչ միայն մարմնապէս Տիրոջն ընդառաջ գնալն է, ինչպէս արեցին Միմէոն Ծերունին եւ երուսաղէմացիները, այլեւ Տիրոջ խօսքին, Տիրոջ ձայնին ընդառաջ գնալը, ընդառաջելը, որ կնշանակի՝ Տիրոջ խօսքին անսալն ու Իր խօսքի համաձայն ապրելը:

Ըստ Հին Եկեղեցում պահպանուած աւանդութեան, երբ Յիսուսին Տաճար բերեցին, ճոնչալով բացուեց Տաճարի արեւելեան դուռը, եւ երուսաղէմացիները ճրագներով ելան Տիրոջն ընդառաջ՝ յիշելով Եզեկիէլ մարգարէի խօսքը. **«Տէրն ինձ ասաց. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացուելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպէսզի Իսրայէլի Տէր Աստուածը մտնի այդտեղով»** (Եզեկ. 44:1): Փրկչի Տաճար գալու մասին դեռ դարեր առաջ խօսել էին մարգարէները, ինչպէս Մաղաքիան, որ գրել էր. **«Յանկարծակի իր տաճարը կը գայ Տէրը, որին դուք փնտրում էք, եւ ուխտի պատգամաբերը, որին կամենում էք դուք»** (Մաղ. 3:1):

Ընդհանրապէս ընդառաջ են գնում, երբ փնտրում են, կամենում են տեսնել եւ սպասում են, թէ երբ կկարողանան իրենց ցանկութիւնն ի կատար ածել, ինչպէս այդ օրուայ ընթերցման մէջ է ասուում իմաստութեան անունից. **«Երանի այն մարդուն, որ կը լսի ինձ, եւ այն մարդուն, որ կը պահի իմ ճանապարհները, մշտապէս կը տքնի իմ դռների առջեւ եւ կը պահպանի իմ դռների շեմերը»** (Առակ.8:34): Յանկարծակի գալը ուրախալի է լինում փնտրողների եւ սպասողների համար, եւ հակառակը՝ անցանկալի լինում նրանց համար, որոնք չէին սպասում: Սպասում ենք մենք Քրիստոսին, ուրախ կլինէի՞նք, եթէ հիմա Տէրը գար:

Ըստ աստուածադիր օրէնքի՝ բոլոր ընտանիքները իրենց անդրանիկ զաւակներին ընծայում էին Աստծուն, քանի որ Աստուած խնայեց, փրկեց նրանց Եգիպտոսում եւ մահուան հարուած չընդունեցին իրենց վրայ: Այդպէս Քրիստոս, իբրեւ Գառն Աստծու, իր վրայ վերցրեց մահուան հարուածը, որով փրկուեցինք մենք ամէնքս:

Քառասնօրեայ մանուկներին Տաճար ընծայելու հետ նաեւ զոհաբերութեան էին բերում զառնուկ կամ եթէ աղքատ էին, զոյգ տատրակ կամ աղաւնու երկու ձագ: Սուրբ Մարիամ այդ օրը աղաւնու երկու ձագ բերեց տաճար ոչ նրա համար, որ աղքատ էին, այլ որ զառնուկի դիմաց Իր Չաւակը պէտք է բոլորի մեղքերի համար զոհաբերուէր՝ իբրեւ Գառն Աստուծոյ:

Տեառնըդառաջը ընծայման բերուած Տիրոջը դիմաւորելն ու ընդառաջ գալն է, այո, բայց այն նաեւ Տիրոջ ներկայութեան մէջ լինելը, կանգնելն է: Այն Տէր Յիսուսի ինքնընծայմանն իբրեւ պատասխան՝ մեր կամաւոր նուրուելն է Աստծուն, մեր ինքնընծայումն է Տիրոջ եկեղեցուն:

Տաճարն Աստծոյ տունն է, մանկանը Տաճարին ընծայելը նոյնն է, որ Աստծուն է ընծայում: Սուրբ Կոյսի կողմից իր Չաւակին Տաճար ընծայելը մեր զաւակներին եւ Տիրոջն ընծայելու յուշում է: Մա չի նշանակում, որ միայն 40 օրական վիճակին, կամ հազուադէպ բացառիկ օրերի կամ էլ տարեկան մէկ անգամ՝ այս տօնին զաւակներին եկեղեցի բերելն է,

այլ մեր գաւակներին Տիրոջը վստահելը, Տիրոջը ծառայութեան տայն է, Տիրոջով ապրելու կենցաղավարութիւն սովորեցնելն է:

Իր քարոզութիւնների ընթացքում Քրիստոս սովորեցրեց ճիշտ կերպով աղօթել, ողորմել, ծոմ պահել, Աստծոյ եւ մարդկանց հետ յարաբերուել, ճիշտ բարեպաշտութիւնը զանազանել կեղծից եւ ցուցամոլութիւնից: Օրինակ եղաւ անձով, խօսքով եւ գործով, կոչ արեց Իրեն նմանուել: Հայոց եկեղեցու միջնադարեան վարդապետներից Սարգիս Կունդն ասում է. «*Երբ Քրիստոս, իբրև գուխ եւ սուաշնորդ բոլոր հաւատացեալների, ընծայուեց Տիրոջը, մեզ եւս ընծայեց Աստծուն*», այն ժամանակ գուխը եւ այժմ մենք՝ մարմինը: Չէ՞ որ Եկեղեցին խորհրդական մարմինն է Քրիստոսի, իսկ Աստծուն հաւատացողների, այսինքն՝ Եկեղեցու գուխը Քրիստոս Ինքն է: : Ամէն: Մենք էլ պէտք է գուխ եղող Քրիստոսի հաւատարիմ անդամները լինենք՝ Իր նմանութեամբ ընծայուել Տիրոջը մեր խօսքով, գործով, կեանքով: Տեսնըդառաջի տօնի շարականի մէջ եւս տեսնում ենք այս նոյն խորհուրդը.

«Դու, Ում բարձունքներում իմանալի գօրութիւններն են փառաբանում, Քրիստոսն, այսօր տանաւ եկար ընծայուելու, որ արարածներին ընծայես Ըն բարձրեալ Հօրը»:

Այս տօնը մեր դիրքը վերանշտելու, մեր անձերը վերաքննելու յիշեցում է, որ մենք Քրիստոսի մէջ ենք, Իր սրտում ենք միշտ, մեր սիրտն էլ պիտի ընծայենք Իրեն եւ այն երկնքի արքայութեան վայր պիտի լինի: Թող այս տօնը պատճառ դառնայ Քրիստոսով մեր բարձրացման եւ ոչ թէ գորման, թող դառնայ մեր մկրտութեամբ Աստծունը դառնալու, Աստծուն ընծայուելու նորոգման գեղեցիկ առիթ:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգևոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Արքեպիսկոպոսի

DAILY BIBLE READINGS FOR 2026 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

- | | |
|-------------|---|
| 9 February | Sts. Mark the Bishop, Plonius the Priest, Cyril and Benjamin the Deacons, and Martyrs Abdelmasih, Ormisdan, and Sayen
Zechariah 8:1-3; Romans 8:28-39; John 15:17-21 |
| 10 February | Sts. Ghevontiank
Wisdom 5:16-23; Isaiah 35:1-2; Isaiah 61:6-7; 1 Peter 1:3-9; Luke 12:4-10 |
| 11 February | Titus 1:12-2:10; John 8:12-20 |
| 12 February | Sts. Vartanank
Wisdom 3:1-8; Isaiah 49:8-9; Hebrews 12:1-7; Luke 6:20-26 |
| 13 February | Titus 3:1-15; John 8:21-30 |
| 14 February | Presentation of the Lord
Evening (February 13): Leviticus 12:6-8; Proverbs 8:22-24; Ezekiel 44:1-2; Malachi 3:1-4; Galatians 3: 24-29; Luke 2:22-40.
Morning (February 14): The same lections as above.
Divine Liturgy: Isaiah 24:21-25:8; Acts 7:47-50; Galatians 4:1-7; Luke 2:41-52 |

“Տեսնըդառաջ”

Faith, Hope and Love are principle graces and values in Christianity. During a person’s baptism, the priest asks the godfather what does the child or the person (the catechumen) being baptised requests. “Faith, hope, love and baptism,” responds the godfather. St. Paul underlines that “the greatest of these is love” (1 Corth. 13.13). In 2016, the Primate instituted a new tradition of blessing newlywed couples in the Armenian Church on the occasion of the Feast of the Presentation of Our Lord and Saviour Jesus Christ. This is the feast celebrating the event of Jesus’ presentation to the temple as a child by his parents. On Friday 13th February 2026, @7:00pm we will be celebrating **Տեսնըդառաջ Presentation of Jesus Christ to the Temple. A special Blessing of Young Families will follow the special prayers. Bishop Hovakim will preside over the proceedings. Please bring your children and let us celebrate this unique Armenian Tradition, to Pray and have fun.**



St Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Join us on

Thursday 12th February 2026 @ 19:00

for a church service to celebrate

VARTANANTZ



For more information please contact the church office 020 73738133
13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

St Yeghiche Armenian Church Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Տեառնընդառաջ, Tiarn'ndaraj

Join us on

Friday 13th February 2026 @19:00

for a church service in celebration of

The Feast of Presentation of Our Lord to the Temple
Traditional Bonfire to follow in the courtyard



For more information please contact the church office 020 73738133
13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

4: Հնդեհանդիս - Memorial Service

Rest of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Matilda, Rene, Artine, Mane and Nara Mackertichian, Seboo Mackertichian and Janet Simpson, for the soul of their Husband who was also a loving Father, Grandfather and Brother the late **MARTIN MACKERTICHIAN** on the 2nd anniversary memorial of his passing, also for their Sister who was also a loving Aunt the late **AGNES HOVSEPIAN** (of USA), also for all the old and new deceased members of the **MACKERTICHIAN** and **HOVSEPIAN** Families.

By **The Armenian Relief Society of GB (Հայ Օգնութեան Միութիւն)**, in memory of their late Ungerouhiner:

JEMMA VARTANIAN ALMARY (Ջեմմա Վարդանեան Ալմարի),

RITA CHERCHIAN (Ռիթա Չերչեան),

KLARA GHARAPETIAN (Քլարա Կարապետեան),

ANOUSH KHALOIAN (Անուշ Խալոյեան),

SUSIE SHEKERDEMIAN (Սիւզի Շիքերտեան),

LIZA ARMAGHANIAN (Լիզա Արմաղանեան),

MARIE KHALOIAN (Մարի Խալոյեան),

SEDA TARLANIAN (Սեդա Թարլանեան),

ANJEL RAHANIAN (Անժել Ռահանեան),

YVETTE MANKASSARIAN (Իվլէթ Մանգասարեան),

ACHIK HOVHANESSIAN (Աչիկ Յովհաննէսեան),

AREG DER BARSEGHIAN (Արեգ Տէր Բարսեղեան),

ARPINEH LEVONIAN (Արփինէ Լևոնեան),

NELLY HOVSEPIAN (Նելլի Յովսէփեան),

HRIPSIK MARTINIAN (Հրիփսիկ Մարթինեան),

HASMIK GASPARIAN (Յասմիկ Գասպարեան),

SIROUN CROFT (Սիրուն Քրօֆթ),

ALICE KARAPETIAN (Ալիս Կարապետեան),

OVSANNA KHULIAN (Ովսաննա Խուլեան),

RUBINA BOGHOSIAN (Ռուպինա Պօղոսեան),

FLOR AZOIAN (Ֆլոր Ազոյեան),

MARIE CHOLAKIAN (Մարի Չոլաքեան),

MAGGIE ASLANIAN (Մագի Ասլանեան),

ANGEL DADOURIAN (Անժել Տատուրեան),

ARSHAKOUHI NANAJANIAN (Արշակուհի Նանաջանեան),

KNARIK HOVHANNESIAN (Քնարիկ Յովհաննէսեան),

SIRAN HAGOPIAN (Սիրան Յակոբեան),

NAZIK GRIGORIAN (Նազիկ Գրիգորեան),

KATHY GHOURJIAN (Քաթի Դուրջեան),

NVART KHLOIAN (Նուարթ Խլոյեան),

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

KNARIG YOUNG-VARTANIAN(Քնարիկ Եանգ-Վարդանեան),
ANGEL BESHIRIAN (Անժել Բէշիրեան),
SONIA CHAPCHOVIAN (Սօնեա Չապչովեան),
ROZIK BANIAN (Ռոզիկ Բանեան),
SEDA ARZOOMANIAN (Սեդա Արզումանեան),
LOUSIK ARZOOMANIAN (Լուսիկ Արզումանեան),
HASMIK KARAMIAN (Յասմիկ Քարամեան),
MANOUSHAG DIKRANIAN (Մանուշակ Տիգրանեան),
JASMEN MINASIAN (Ժասմէն Մինասեան)

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs
Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation,
Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us *before Thursday Evening*. Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

- By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
- By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
- By electronic card reader at the Church entrance.
- By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.



St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk